

Մ. ԽԱՏԱՏՐԱՅԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ «ՏԱՂ ՔԱԶԻ ԼԻՊԱՐՏԻՆԸ»

Միջնադարյան նույր ու պայծառ քննարկող Հովհաննես Թլկուրանցու հեղինակությունը մեզ հասել են նաև Լիպիկյան պոեզիայի սակավաթիվ, բայց ուշաբուն էջեր: Գրանցից «Տաղ քաջի Լիպարտինը», իրեն հայրենասիրական ոգր, անշուշտ, այժմ էլ զեղարվեստական և պատմական հետաքրքրություն է ներկայացնում: Դա Լիպիկյանի հայկական պետության վերջալուստին մեր ժողովրդի կենաց և մահու պայքարի մի զրվագի արտացոլքն է, իրապատում մի գործ հայրենական կոմուն հերոսարար քնկած Լիպարիս սպարապետի մասին: Սարգիս անունով տաղասացի «Հողովոյ սուրբ ևս և ամրիծ» սկզբածրով ներբող-եղերերոգր, «Պատմութիւն քաջ Լիպարտինը» խորագրով գրույցը, ժամանակագրական մի երկու հատվածներ ու ձեռագրական յլատ հիշատակարաններ և, վերջպես, Թլկուրանցու ողբն այն ամենն է, ինչ կա Սոս պաշտպան սպարապետի մասին: Նշված գործերից գրույցը, ներբող-եղերերոգր և ողբը, ճիշտ է, նախ և առաջ զեղարվեստական երկեր են, բայց և անուրանալի է նրանց ճանաչողական արժեքը, մանավանդ Թլկուրանցու երկը շնչում է պատմական հավաստիությունը:

«Տաղ քաջի Լիպարտինը» ձեռագրերից առաջինը լույս աշխարհ հասնելու և կիշանը, նախ՝ 1868 թ. «Քաղմավակում» «Հողովոյ սուրբ ևս և ամրիծ» բանաստեղծությունն առընթեր նա հրատարակել այդ երկի սկզբի երեք տները (1—4 և 7—8 տողեր, նույնը 1870 թ. արտատպվել է «Յուշիկո հայրենաց հայոցում», իսկ մեկ-երկու աննշան տարընթերցվածներով՝ «Հայաստանում»), ապա՝ քիչ թի շատ ամրողական բնագիրը՝ «Սիսուանում» և «Հայաստանում»: Ինչ ինչ ձեռագիր հիմքեր է ունեցել կիշանը, բանասիրությանն անհայտ է:

1933 թ. «Հանգես ամսօրեայում» տաղի քննական բնագիրը ներկայացրել անվանի բանասեր Ն. Ակիսյանը՝ նկատի առնելով ոչ միայն վերոհիշյալ հրատարակումները, այլև Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 515 գրչագրի թերի օրինակը (պարունակում է միայն 33—50 տողերը): Նույն օրինակների հիման վրա է կազմված նաև էմ. Պիվազյանի հրատարակած համեմատական բնագիրը (տե՛ս Հ ո վ հ ա ն ն և ս Թ լ կ ու Ր ա ն ց ի, Տաղեր, Երևան, 1960, էջ 199—204), իսկ Ն. Եպս. Մովականինը՝ միայն այլևայլ տպագրերի օգտագործմամբ (տե՛ս Խ և Յ ո վ հ ա ն ն և ս Թ լ կ ու Ր ա ն ց ի, Տաղագիրք, Երուսաղեմ, 1958, էջ 1—3):

Ժամանակին Նորայր Բյուզանդացին նկատել է, որ «Սիսուանում» «Տաղ քաջի Լիպարտինի» հրատարակված օրինակը «թերի է և կամավ այլայլալ ի պատճառս թուրքին»: Այդ դիտողությունը վերաբերում է մի շարք բառերի՝ օտաճնց (6-րդ, 15-րդ և 39-րդ տողեր), օտաբաստան (6-րդ տող), օտաբական (17-րդ տող),—որոնց ընդգծված մասերը, ինչպես պարզվում է, փոխարինել են թուրք, տաճիկ, մահմալտ բառերին,—և բացակայող 9—10-րդ տողերին: Անկասկած, երախտավոր Ակիսյանն այդ փոփոխումները և կրճատումը կատարել էր՝ մտահոգված իր աշխատության ճակատագրով, աշխատություն, որ հասնելու էր թուրքական բնասիրությանը և իր ստեղծագործությանը: Ընդհանուր փոխարինվում են ձեռագրական Տաճիկստան և թուրքաց ընթերցվածներով, երևան են զայիս բաց թողնված 9-րդ տողի՝ առաջին և 10-րդի երկրորդ կիսատողերը, սակայն, այդուամենայնիվ, դարձյալ գրաքննչական պատճառներով, հրատարակողը ներառվորություն չի ունեցել մինչև վերջ ճշտել և լրացնել բնագիրը:

Շուրջ երեք տասնամյակ անց Ակիսյանը իր հրատարակած բնագրում, ինչպես ինքն է գրում, ևնթադրարար ուղղել է Ակիսյանից մուծված «կամավ այլայլումները»՝ օտաբ (նաև՝ օտե) փոխարինելով թուրքմալտ-ով, և փորձել է վերականգնել 21—22-րդ տողերի սարվածքը, որի բունգահությունն ու որիմը Ակիսյանի օրինակներում, աբիբ բառի հավելման և տողերի խառնվելու պատճառով, իսկապես աղարտված են: Որովհետև բանասերն իր տրամագրության տակ, բացի մեր Մատենադարանի վերոհիշյալ № 515 գրչագրի պարունակած հատվածից, որն է ձեռագիր օրինակ չի ունեցել, հետևաբար իր առաջագրած նպատակին հիմնականում չի հասել, մանավանդ որ բնագրից դուրս է թողել 9—10-րդ պակասավոր տողերը:

Փոխարինված բառերը, աղարտված ու պակասավոր տողերը վերականգնել-շտկելու համար անհրաժեշտ էր ձեռք բերել տաղի ամբողջական ձևագիրը: Մեզ հաջողվեց ստանալ վենետիկի Մխիթարյան միարանության մատենադարանի № 1371 տաղարանում (գրություն ժամանակ՝ 1641 թ., վայր՝ Կաֆա) պահպանված այդպիսի օրինակ<sup>5</sup>: Համեմատությունը ցույց է տալիս, որ վերջինս թեև մանր տարբերվածներով, բայց, այնուամենայնիվ, տարբերվում է Ալիշանի հրատարակածներից և կարևորը՝ ամբողջական է: Ստորև ներկայացնում ենք «Տաղ քաջի Լիպարտինի» համեմատական բնագիրը՝ հիմք ընդունելով նշված օրինակը, մեր Մատենադարանի № 515 ձեռագրի հատվածը և Ալիշանի տպագրածները:

ՏԱՂ ՔԱՋԻ ԼԻՊԱՐՏԻՆԻ

է՛ աստուծոյ անունն օրհնեալ,  
որ անըսկիզբն և սնվախճան,  
Որ ուժ երեստ քաջ Լիպարտին  
և զօրացոյց զիւր սուրբ ծառայն:

Զերթ սուրբ Սարգիս քաջն ի նըման,  
ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,  
Քան ըզՄուշեղն այլ խիստ յաղթող,  
քան ըզՏրրդատ հայոց արքայն:

5 Յորժամ հեծնուր զիւր ձին վազան,  
ի ձեռն առնոյր ըզուում ճօճան,—  
Սասանէր ազգրն թուրքանց,  
դողայր ամէն Տաճիկաստան:

<sup>5</sup> Տաղի օրինակությունը ընդհակառակումը ստացանք Վ. Հովհաննեսյանից:

Աղբյուրներ.

A—Մ. Ղազարի Մխիթարյան մատենադարանի № 1371 ձեռագիր (ժամանակ՝ 1641 թ.), էջ 249—255:

B—Մաշտոցի անվան մատենադարանի № 515 ձեռագիր (ժամանակ՝ XVII դար), թուղթ 26 (ունի միայն 33—50 տողերը):

Ը—Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 226:

Ժ—Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 539—541:

Է—Ղ. Ալիշան, Յուզիկի հայրենեաց հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1870, էջ 512 (ունի միայն 1—4 և 7—8 տողերը):

Ը<sub>1</sub>—Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 541 (ունի միայն 1—4 և 7—8 տողերը):

Խորագիր.

A Այլ տաղ քաջ Լիպարտին, դոր Bee, չունեն Ը Տաղ քաջի Լիպարտին d Տաղ ի Լիպարտին քաջ

1 Acd Թաստուծոյ ee<sub>1</sub> օրհնած

2 Acd Որ ևսուր ուժ փխ Որ ուժ Երեստ քաջ A Լիպարտին

3 A Երթ ee<sub>1</sub> ի փխ Զերթ ee<sub>1</sub> քաջին նման

4 e ըզՄուշեղ Acd յաթող ևղևալ փխ այլ խիստ յաղթող

5 AC դըռում A ճոճան

6 Ը օտրանց փխ թուրքանց d (ևղիպտական) փխ թուրքանց Ը օտարաստան փխ Տաճիկաստան d Տաճիկաստան

Պատերազմին չըկայր խափան,  
ամէն տարի՝ տասն ու քրսան.  
Մի՛նն ըղճումանըն հալածէր,  
արին հանէր զերթ զետ քիհան:

Ապա տաճկաց աղզն անհաւան,—  
արին արբօղ, ամբարտաւան,  
10 Քրիստոսատեաց և շար գազան,  
օձ և կարիճ, ի յիժ նրման, —

Զերթ քացխով տիկ շարեօք լըցան,  
ժողովք առին ՚ի ի Սիս եկան,  
Մանչակ անուն շարեաց մառան,  
մօտ ի քաղաքն եկան հասան:

Վախսուն հազար մարգ միարան  
զրրեհն հագան ՚ի ի ձին հեծան,  
Զեռուին առին ըղռում ճօճան,  
թուր և ասուպար ու կանգնեցան:

15 Վախսուն հազար թուրքանց ելան,  
ձայն ձրղեցին ու կատղեցան,  
Հարին ըղփող պատերազմին,  
ղպուկն ու զնաֆիրն ըզգաւ հարկան:

Այն անօրէն շար կենդանիքն,  
որ են նորա մահմէտական,  
նու ի յահէն քաջ Լիպարտին  
զինչ զուռ զողան ՚ի առաջ շի գան:

Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.  
«Քա՛ջ Լիպարտ, մե՛ծ զօրական  
20 Հեծելրս քեզ համար եկան  
մինչ յայս տեղիս, ուր կանգնեցան:

7 e Պատերազմի և կիր հափայն (?) փխ Պատերազմին չըկայր խափան e, Պատերազմել եկեր հափայն փխ Պատերազմին չըկայր խափան ee, ամեն Acd եւ փխ ու

8 ee, ինքն փխ մինն e հալածանէր cd զէտ e շիք զերթ e գետեր 9—10 e չուցի

9 d այլազոն այն փխ տաճկաց աղզն d շիք արին արբօղ ամբարտաւան

10 d շիք Քրիստոսատեաց և շար գազան

11 cd ու փխ ՚

12 A մարան d աման փխ մառան

13 e զրէհն cd ու փխ ՚

14 A Զեռուին Ac զըռում A ճօճան

15 e օտրանց փխ թուրքանց d (զորաց) փխ թուրքանց

16 d զպուհարկան

17 e օտարական փխ մահմէտական d այլասրման փխ մահմէտական

18 A զողին e շիք ՚ d ու փխ ՚

19 A Եանժամ

Վաթսուն հազար մարդ կոտորեցիր,  
որ զՄանչակին դուլած տրդան,  
Առիր ըզթախտըն սուլթանայ,  
բերիր ձիանուն շատ թախտան»:

Քաղցրիկ ետուր պատասխանի,  
թե՛ սԾս՝ քաղթիս շարին փոխան,  
Բայց չէ պատեհ զըրուց առնել,  
թէպէտ հասաւ ինձ օր մահուան»:

25 էջ և թամբեաց զիր ձին վազան,  
հազաւ զրրեհ՝ և ի վրայ ճօշան,  
Ի գլուխն եղիր յաղթող վահան,  
ի ձեռն էառ ըզուում ճօճան:

Երկրրպագեաց սուրբ աթոռոյն  
և ծունր եղիր ամէն խորան,  
Փառաւորեաց զերրորդութիւն,  
դուլեաց զիշխանսըն միարան:

Հառչեաց, զորգեակըն համբուրեաց,  
հանց որ զհեծելն ի լաց եհան.  
30 Ասաց. «Որդեա՛կ իմ Յովհաննէս,  
Վասիլ եղբա՛յր իմ սիրական,

Փառօք տիկի՛ն դու Մանանայ,  
իշխանուհի՛ արևնըման,  
Հայեա՛ց պատկերս ի մանկութեան,  
որ տի մրտնում ի հող տապան»:

Քաջ Լիպարիտն ասաց ցարքայն.  
«Հայոց թաղւոր ազնուական,  
Հաստատ՝ և ամո՛ւր պահէ զկարմունճն,  
որ ես մրտնում ի մէջն ու գամ»:

35 Յիշեաց զՔրիստոս ահեղաձայն,  
կրտրեց և անցաւ առիւծնըման.

21 A կոտորեցիր cd (ազան) առիր

22 cd չիր Առիր A զթախն c թուխանայ՝ փխ սուլթանայ d թախտան (արիր)

24 A պատէհ

25 Ac գրէհ Ac ի վերայ A այ ճաւշայ d ճօշայ

26 d ի գլուխ Ac զըրում A ճոճան

27 d ամեն

28 A զիշխանըն

29 A հառաչեաց

33 Acd Լիպարիտ B արքայն A թաղաւոր B արքայ փխ թաղւոր d ազնուական

34 B չիր՝ և c ու փխ՝ և B զի կարմունճն d զկարմունճն

35 B կոտորեց զ անցաւ d առիւծանման

Չհեծելն արար փախրստական  
'ւ ի հետն հրթայր ընծանրման:

Լաշկարն արար զիզան զիզան,  
հանց որ արին զետեր ելան:  
Նա թագաւորրն շարացաւ.  
զհեծելն առին 'ւ ի յետ դարձան:

Թուրքանց հեծելն յառաջ եկին,  
զկարմունճն առին ու կանգնեցան:  
40 Երբ Լիպարիտն ի յետ դարձաւ,  
նա շար հեծելն ի զէմ ելան:

Ըռումբ գրրին ամէն զիհացն,  
շատ խոցեցին զյաղթող վրկայն.  
Հայէր ողորմ յաջ և ի ձախ՝  
զոչ ոք գրտաւ իւր օղնական:

Գազանաղէմ անօրինին  
ծարաւ էին սրբոյն արեան.  
Ձիւր սուրբ մարմինն ի հօն թողին,  
զգրլուխն առին ի հետ տարան:

45 Երբ որ հեծելքն ի յետ գնացին,  
'ւ ապա սրսցիքն ի դուրս ելան,  
Կրրկին առին 'ւ ի Սիս մրտան,  
քաղբին կրրակ զարկին 'ւ ելան:

Շատ դարպասնին աւեր ածին,  
յեկեղեցեացըն զանազան,  
էրէցկրնին գերի տարան,  
սարկաւազունքըն միաբան:

Ճառագայթեց լոյսն ի վերան  
սուրբ մարմնոյն ի հանգրստեան!

<sup>36</sup> B հեա ևզիր փխ հետն երթայր A ընծայ նման

<sup>37</sup> Ac Լաշկ արաւ d Լաշկարաւ

<sup>38</sup> A նայ B առաւ ետ դարձաւ փխ առին 'ւ ի յետ դարձան cd ու փխ 'ւ A չիք ի

<sup>39</sup> Bd Թուրքաց c օտրանց փխ Թուրքանց A զհեծելն առաջ B առաջ եկան B զկարմունճն d զկարմունճն B կանկնեցան

<sup>40</sup> A նայ

<sup>41</sup> Acd զիմաց B զազթող

<sup>42</sup> B աջ A չիք ի d ոչ որ B չի գտաւ A գիւր

<sup>43</sup> B անօրէնին Acd սրբոյն արեան ծարաւէին B սուրբ

<sup>44</sup> d հոն Acd տարին

<sup>45</sup> B հեծելն գնաց B չիք 'ւ A ապայ B սրսցիքն

<sup>46</sup> B չիք ի d չիք (առին)'ւ Acd եկան փխ մտան

<sup>47</sup> B արպասնին B 'վ եկեղեցիքն

<sup>48</sup> Ac Երիցկանայր d Երէց կանանց Ad սարկաւազունքըս

<sup>49</sup> A Լոյս ճառագեց լոյսն ի վերան B Լոյս ճառագայթեց վրան d Լոյս ճառագթեց լոյսն ի վերան Acd եւ սուրբ

50 Քաջ Լիպարիտն ու սիր Յոհան  
քրիստոնէից համար մեռան:

Յորտեղ նրստին հաց ՚ւ ի սեղան  
ժողովք բազում և շատ իշխան,  
Յիշեն ըզնա սուրբ բահանայքն,  
տէր ողորմի ասեն նրմա:

Խէ Յովհանէս Թուկուրանցին  
կարձ և ողորմ ասաց զայս բան.  
Դուք յիշեցէ՛ք զինքն հանապազ,  
յառա՛կ ասէք ի մի բերան:

Ս. Մ. Խաչատրյան

## «ПЕСНЬ О ХРАБРОМ ЛИПАРИТЕ» ОВАНЕСА ТЫЛКУРАНЦИ

### Р е з ю м е

Перу яркого представителя армянской средневековой поэзии Ованеса Тылкуранци принадлежит более двух десятков произведений. Плач поэта «Песнь о храбром Липарите» посвящен памяти спарапета Липарита, погибшего в 1369 г. в борьбе за независимость Киликийского армянского государства.

Плач был издан несколько раз: поэт и историк Алишан издал его отдельные рукописные варианты, а критические тексты издали филологи Н. Акинян, Н. Цовакан и Эм. Пивазян. Все они имеют некоторые недостатки: не достают отдельные строки, имеются слова, не характерные для авторов, и т. д.

Издаваемый ныне сводно-критический текст обращает на себя внимание тем, что составитель, используя рукопись № 1371 книгохранилища венецианских мхитаристов, имел возможность представить его в более уточненном и дополненном виде.

<sup>50</sup> B Քաջ Acd Լիպարիտ B Սոտն

<sup>51</sup> cd ու փխ ՚ւ A շիր շատ

<sup>52</sup> d բահանայք Բոլորր տան փխ տէր (Ուղղումն Ակիեյանիցն է.) A նմայ

<sup>53</sup> cd Խէ՛վ Ac Յովհանէս d Թուկուրանցին A ասայց Ac բանս